

## ՀԱՆԴԵՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ Ի ՎԵՐԱՑ ԺԱՄԱՆՈՒԹԻՒՆ

(Քաղուած ի Ա. Օդուտինուի Խոստովառութիւնք ԽՄ գրոց) :

Ժամանակն ի՞նչպէս կը յախորի .—  
 ... Ով Տէր, մենք աղէկ կը զանազա-  
 նենք ժամանակաց խորոցներն, և զա-  
 նոնք մէկմէկու հետ կը համեմատենք  
 և կը բացատրենք իւրաքանչիւրին աւե-  
 լին կամ նուազն : Կը չափենք նաև թէ  
 քանի աստիճան՝ ժամանակ մը կարձ է  
 կամ երկայն քան զմիւմն . և կ'ըսենք .  
 կրկին է, եռապատիկ է, կամ կէս, և  
 կամ թէ զուգահաւասար : Բայց մենք  
 կը չափենք միայն զժամանակն զդալով  
 իրեն անցնիլը . վասն զի զանցեան՝ որ  
 ոչ ևս է, և զապազայն՝ որ նոյնպէս չէ  
 ինչ, ով կրնայ չափել : Կարելի է ըսել  
 թէ ոչինչն կրնայ չափուիլ . ով կը հա-  
 մարձակի : Ուրեմն ժամանակն կրնայ  
 միայն ըմբռնելի ըլլալ և չափուիլ երբ  
 անցնելու հետ է . և ոչ ևս երբ անցած  
 է, վասն զի ոչ է :

Անցեալն ու ապագայն ո՞ւր են .—  
 Կը նուզարկեմ միայն, ով չայր, և ոչ  
 թէ կը հաստատեմ . գու Աստուած իմ  
 հսկէ վրաս և առաջնորդէ ինձի : Ով կը  
 համարձակի ժխտել զոր ես 'ի ման-  
 կութենէ սորված և մանկանց վարդա-  
 պետած եմ, այս ինքն թէ երեք ժամա-  
 նակը կան, անցեալ, ներկայ և ապա-  
 գայ, և ըսել թէ ներկայն միայն կայ,  
 միւս երկուքն ոչ ինչ են : Գուցէ ճշ-  
 մարիտ է, թէ անոնք ևս կան, և թէ  
 ժամանակն անծանօթ առանձնոցէ մը  
 յառաջ կու գոյ, յապագայէն ըլլալով  
 ներկայ . և թէ կ'երթայ կը խորասուզի

ուրիշ անծանօթ առանձնոցի մը մէջ,  
 երբ ՚ի ներկայէն կ'ըլլայ անցեալ : Եւ  
 իրաւցընէ երբ ապագայն իրագչկայ, ուր  
 տեսան զայն ուրեմն անոնք՝ որ գուշա-  
 կեցին . և անոնք որ անցելոյն վայ կը  
 խօսին՝ ճշմարտախօս կ'ըլլայէն արդեօք,  
 եթէ իրենց մոտացն առջև չունենային  
 զայն :

Եթէ այս երկու ժամանակներս իրա-  
 պէս չըլլային՝ պիտի չկարենային մեզի  
 տեսանելի ըլլալ : Ուրեմն անցեալն ալ  
 ապագայն ալ էութիւն մ'ըլլալու են :

Թէ ի՞նչպէս անցեալն և ապագայն  
 մեզի ներկայ են . — Սակայն ներէ ին-  
 ծի, ով Տէր, քննել դեռ ևս, և օգնէ,  
 ով յոյս իմ, որպէս զի իմ ճիգնս զիս չը  
 շփոթէ : Եթէ իրագ կան ներկայն և ա-  
 պագայ, կ'ուզեմ գտնել թէ ուր են :  
 Իսկ թէ առ ժամն չեմ կրնար, բայց  
 գիտեմ, թէ ուր ալ ըլլան՝ ապագայ և  
 անցեալ չեն, այլ իրեն ներկայ . վասն  
 զի եթէ և անդ ապագայ են՝ իրագ չը-  
 կան դեռ . և եթէ անցեալ այլ ոչ ևս  
 են : Ուրեմն ուր ալ ըլլան, և ինչ ալ  
 ըլլան միշտ ներկայ են : Թէպէտ և երբ  
 մենք ճշմարիտ անցեալ իրգ կը պատ-  
 մենք, ասոնք մոտաց յիշողութենէն կը  
 քաղուին, այլ ոչ թէ իրենց իրականու-  
 թիւնն որ անցաւ, այլ խօսքերն, որը  
 'ի նոյն պատկերաց ծագելով, և անցնե-  
 լով 'ի զդայարանս' տպաւորեցին մեր  
 հոգւոյն մէջ անոնց հետքը : Այսպէս իմ  
 մանկութիւնս որ անցաւ, յանցելոյն

մէջ թաղուած է և իրօք ոչ ևս է , աս-  
կայն երբ կը մտածեմ և կը պատմեմ  
ներկայապէս կը տեսնեմ անոր պատ-  
կերը , վասն զի գեռ կը տեսէ իմ յիշո-  
ղութեանս մէջ :

Բայց մի և նոյն կերպով կը մեկնուի  
նաև ապագայից գուշակութիւնն , այն-  
պէս որ կարենայ մէկն յառաջածանօ-  
թութիւն ունենալ այն իրաց պատկե-  
րացն , որպէս թէ ըլլային որք գեռ չկան  
իրօք : կը խոստովանիմ , ո՞լ Տէր , թէ  
չեմ գիտեր : իմ դիտցածս այս է . թէ  
յաճախ ինչ որ պիտի գործենք՝ նախ  
անոր վրայ կը մտածենք , և թէ այս  
մտածութիւնս ներկայ է , մինչդեռ մտա-  
ծուած գործն գեռ չկայ իրապէս . վասն  
զի ապագայ է , և պիտոր ըլլայ ձեռն 'ի  
գործ առնենուս պէս . վասն զի այն  
ժամանակ աղ ապագայ չէ , այլ ներ-  
կայ :

Ի՞նչ ալ ըլլայ այս ապագայի յառա-  
ջածանօթութեան իսկութիւնն , ան-  
շուշտ եմ թէ ուրիշ կերպով չկրնար մե-  
զի տեսանելի ըլլալ , բայց եթէ ինչպէս  
որ է , և այն որ է աղ ապագայ չէ , այլ  
ներկայ :

Երբ խօսակցութեան մէջ կ'ըսնէք թէ  
ապագայն կը տեսնուի , ոչ թէ այն բանն  
կը տեսնուի որ գեռ չկայ և միայն  
կը յուսացուի , այլ գուցէ անոր պատ-  
ճառն և նշաններն կը տեսնուին , որը  
արդէն կան . և որուն համար ոչ թէ  
ապագայ՝ այլ ներկայ են յաշս յայնս  
խոկացովին , որ կը հետևեցնէ թէ ինչ որ  
'ի միտմն կ'իմանայ պիտի իրագործուի :  
Այս մտածութիւնս կայ յառաջուց  
մորքին մէջ , և առ այս գուշակովն ներ-  
կայ կը տեսնայ զայն :

Ի մէջ այլոց օրինակ մը միայն 'ի մէջ  
բերենք . Արշալցոյը տեսնելով՝ արեւուն  
եքը կը գուշակեմ . Տեսնածս՝ ներկայ  
է , իսկ գուշակածս՝ ապագայ : Ոչ թէ  
արեգակն որ արդէն կայ , այլ անոր  
եքն՝ որ գեռ չկայ : Նոյն իսկ եքը չէի  
կրնար գուշակել , եթէ չունենայի իմ  
մորքին մէջ անոր պատկերն , ինչպէս  
հիմա խօսած ժամանակս ունիմ : Բայց  
արշալցոյն՝ զոր ես կը տեսնամ յերկինս ,

ոչ թէ արևուն եքըն է կարապետելովին  
այնմ , ինչպէս և ոչ այն պատկերն , զոր  
հոգւցոյ մէջ նկարուած ունիմ , այլ այս  
երկու իրաց զուգընթացութիւնն , որ  
կու տայ ինձի ըսելթէ արեգակն պիտի  
ծագի :

Ուրեմն ապագայն գեռ չկայ իրօք .  
ուրեմն ոչ ինչ է . ուրեմն չկրնար տես-  
նուիլ . բայց կրնայ գուշակուիլ 'ի ներ-  
կայ և յերսնելի հանդամանաց :

Ապագայի գիտուրեան վրայ . —  
Բայց ըսէ ինծի , ով թագաւոր արարա-  
ծոց , ինչպէս կ'ուսուցանես մարդկանց  
զհանդերձեալն , գու որ կը հրահան-  
գես քու մարդարէներդ : Ի՞նչ վարդա-  
պետութիւն է այն որով գու զապա-  
գայն կը յայտնես . գու կ'ըսեմ 'յորում  
ամենենին ապագայ չկայ . կամ ինչպէս  
կ'ուսուցանես զներկայն ապագայ ի-  
րաց . վասն զի բան մը որ չկայ չկրնար  
սորվուիլ : Այս մարդապետութիւնս իմ  
հասկրցողութենէս շատ հեռու է և կա-  
րողութենէս շատ վեր է , և անոր չեմ  
հասնիր , բայց միայն քու չնորհքովդ  
պիտի կարենամ զիտնալ , երբ չնորհես  
ինձի , ով ըլլոյ 'իմ նուաղեալ աշաց :

Ի՞նչպէս անուշանակոյելոր է ժամա-  
նակին տարրերուրիւնքը . — Արդ ա՛լ  
պայծառ է և բացայայտ , թէ ապա-  
գայն ու անցեալն իրօք չկան . և թէ  
ճիշդ կերպով կարելի չէ ըսելթէ երեք  
ժամանակք կան , անցեալ , ներկայ և  
ապագայ : Բայց թերես անծիցդ ըլլայ  
ըսելն , թէ երեք ժամանակներն ասոնք  
են . ներկայ՝ անցելոյն , ներկայ՝ ներ-  
կային , և ներկայ՝ ապագային : Երեք  
տարրեր բաներ են ասոնք , կը տեսնեմ  
ես , բայց միայն 'ի միտս : Ներկայ ան-  
ցելոյն՝ է յիշողութիւնն , ներկայ ներ-  
կայի՝ է յանդիմանատեսութիւնն , իսկ  
ներկայն ապագայի՝ է ակնկալութիւնն :  
Եթէ այս այսպէս կրնայ ըսուիլ , կը  
ճանչնամես ալ և կը խօստովանիմ , թէ  
երեք ժամանակք կան . կը հաւանիմ  
նաև թէ անչգորէն կրնայ ըսուիլ՝ ա-  
սոնք են երեք ժամանակքն , այսինքն՝  
անցեալն , ներկայն և ապագայն : Այս

չէ ինչ կարեոր, ուստի չեմ ուզեր հա-  
կառակիլ և ոչ ալ իբրև սխալ գէմ բո-  
ղոքել. միայն թէ ինչ որ կ'ըսուի, այն-  
պէս ալ հասկըցուի, այսինքն՝ թէ այն որ  
պիտի պայ, և այն որ անցաւ՝ բողոքին  
ոչինչ են: Շատ քիչ են իրաւցինչ այնք  
որոնց վրայ խօսուի ճշգիւ, այլ շատ  
բանի վրայ անճշգութեամբ կը խօսուի,  
սակայն կը հասկըցուի՝ ինչ որ կ'ուզեմք  
հասկըցնել տալ:

Ի՞նչպէս չափեղոր է զժամանակ. —  
Քիչ առաջ ըսի, թէ մենք այն ատեն կը  
չափենք զժամանակն՝ երբ կ'անցնի. և  
կ'ըսենք թէ պյո ժամանակս կրկին կամ  
աւելի երկայն և կամ կարճ է, կամ հա-  
ւասար են մէկմէկու. և նոյնը կրնամք  
ըսել նաև ժամանակաց ուրիշ փոքրա-  
գոյն մասանց համար՝ պյո կերպով չա-  
փելով զանոնք: Ուրեմն՝ ինչպէս կ'ըսէի,  
ժամանակն իւր անցնելէն կը չափուի:  
Եթէ մէկն առարկելու ըլլայ ինձի, ուս-  
կից դիմես դու. կը պատասխանեմ. զի-  
տեմ տեսնալովս որ կը չափուի, զոր չենք  
կրնար ընել անցելոյն և ապադային, որ  
չեն ինչ:

Բայց ինչպէս կրնայ չափուիլ ներ-  
կայն՝ որ ամեննեին միջոց (տեղողութիւն)  
չունի: կրնայ չափուիլ իր անցնելուն  
ժամանակ, վասն զի անցնելէն ետքն  
ալ չափի տակ չինկնար, վասն զի ալ բան  
մը չկայ չափուելիք: — Բայց ուստի  
կու գայ, ուստի կամ ուր կ'անցնի, չա-  
փուելուն ժամանակ: Ուստի կու գայ,  
եթէ ոչ ապագայէն. ուստի կ'անցնի,  
եթէ ոչ ներկայէն. և ուր կ'երթայ՝ եթէ  
ոչ յանցեալն: Ուրեմն ըսել է թէ անկէ  
կուգայ՝ որ գեռ չկայ, անկէ կ'անցնի՝  
որ միջոց չունի. և յայն կը դիմէ՝ որ ալ  
չկայ: Բայց սակայն ինչպէս կը չափենք  
մենք զժամանակն՝ բայց եթէ պյո և այլ  
տեղութեամբքն. վասն զի ինչ է որ  
կ'ըսենք թէ սոսկ է, կրկնապատիկ, ե-  
ռապատիկ, հաւասար, և ուրիշ ինչ  
նմանօրինակ բացատրութիւն որ կ'ը-  
սեմք, եթէ ոչ ժամանակի մասնական  
միջոցք կամ տեղութիւնք: Ի՞նչ միջոցի  
մէջ ուրեմն կը չափենք զժամանակն որ

կ'անցնի. արդեօք յապագայնն, յորմէ կը  
ծագի. բայց բան մը քանի որ չկայ  
չկրնար չափուիլ արդեօք ՚ի ներկայն  
ընդ որ կ'անցնի. սակայն անմիջոցն ըը-  
կրնար չափուիլ. Արդեօք յանցեալին  
յոր կ'ընթանայ. բայց ինչպէս կրնանք  
չափել զայն, որ ոչ ես է:

Աստուածմէ կը խնդրէ որ ժանցընել  
իրեն այս գաղտնեիրս. — Եռանգագին  
կը փափաքի իմ հոգիս այս ժժուարա.  
կընճիռն գաղոնիքս իմանալ, ով ծէր  
Աստուած, բարեգութ Հայր իմ. մի  
զլանար իմ փափաքանացս, կ'աղաչեմ  
Քրիստոսի սիրոյն համար, այս ժանո-  
թութիւնս՝ որ սովորական է և սոնյայտ,  
տուր ինծի կարողութիւն թափանցելու  
յայն և քու բարեգութութեանդ լւսով  
պյոյժառ նկատել զայն: Առ ո պէտք է  
դիմեմ ես: Առ ո քեզմէ աւելի կրնամ  
արդիւնաւոր կերպով խոստովանիլ իմ  
տղիտութիւնս. որ չես ձանձրանար իմ  
եռանդնարորդոք հետազոտութեամբա  
յուսումն Ս. Գրոց: Տնը ինձի զայն զոր  
կը սիրեմ. վասն զի կը սիրեմ, և ՚ի քէն  
է այդ սէր: Տնը ով Հայր. որ արդարեն  
ոգիտես պարզես բարիս տալ որդոց  
քոց: առնը՝ վասն զի սկըսայ քննել  
և ՚ի տագնապի եմ, մինչև որ պարզես,  
իսէր Քրիստոսի և յանուն Սրբոյն սրբոց  
կը ինդքեմ, որ ոչ ոք ընդղիմարանէ ին-  
ծի. «Եւ ես հաւատացի, վասն որոյ և  
խօսիմ իսկ»: Այս է իմ յօսս և ՚ի ոյն  
կ'ապրիմ, թէ պիտի զմայլիմ՝ ի վայելն  
Աստուծոյ:

«Ահա չափով եղիր զաւուրս իմ»,  
և կ'անցնին. բայց թէ ինչպէս չեմ զի-  
տեր: Եւ միշտ ատեն՝ ատեն, ժամանակ՝  
ժամանակ, կ'ըսենք: Ո՞րչափ ժամանակ  
է որ այս ոք այսպէս խօսեցաւ. ո՞րչափ  
ժամանակ կայ որ այն ոք զայն ինչ ը-  
րաւ. ո՞հ, ո՞րչափ ժամանակ կայ զոր  
ես չեմ տեսած: Եւ դարձեալ, թէ այս  
վանկս որ երկայն է՝ երկու ժամանակ  
ունի. և այն որ կարճ է՝ մի միայն<sup>1</sup>:

1 Յստ լատին լեզուի բնութեանն է գիտաւո-  
րապէս այս խորհրդածութիւնս, յորուան ինչ-  
պէս յայնին է, սուզ և երկար վանկք կան ՚ի  
բառու:

Այս բաներու կ'ըսենք և կը լսենք, կը հասկըցուին և կը հասկընանք. վասն զի ամենապայծառ. և առ. հասարակ սովորական, և միանգամայն ասատիկ խըրթին են և նորօրինակ :

Թէ ի՞նչ է ժամանակն. — Լսեցի ի-մաստուն անձէ մը, թէ ժամանակն ուրիշ բան չէ՝ բայց եթէ արեգակն, լուսնի և աստեղաց շարժմունքն <sup>1</sup>. և չհամոզուեցայ ամենսին : Վասն զի ինչո՞ւ համար ամենայն մարմնոց շարժմունքն ժամանակ պիտի շըլլայ : Եթէ շինանէին երկնից լուսաւորներն, և փոխանակ անոնց բրտի մանիւն սկըսէք հորովիլ, ալ ժամանակ պիտի շըլլար անոր հորովմունքը չափելու, և ըսելու թէ կամ հաւասար միջոցի մէջ կը կատարուին, և կամ — եթէ անիւն երբեմն ծանր դառնար և երբեմն երագ — թէ իւր շրջաններէն ոմանք աւելի երկայն և ոմանք կարճ են : Կամ այս բաներս խօսած ատենիս, ալ ժամանակի մէջ պիտի չիօսպինք, և պիտի շըլլան մեր խօսակցութեան մէջ վանկերէն ոմանք երկայն և ոմանք կարճ, աւելի կամ նուազ ժամանակով : Ո՛վ Աստուած իմ, այս պղտիկ օրինակով ճանցուր մարդկանց փոքր և մեծագոյն իրաց ընդհանուր ծանօթիւնները :

1 Ագրեսուաէլ և իւր համափոհք կ'ըսէին թէ մարմնոց շարժմունքն է ժամանակն, կամ թէ այն շարժմանց թիւն : Բայց սիստ է այս. նորի, վասն զի շարժմունքն բազմութիւ և զանազան աեսակ ըլլարով՝ ի հարիէ անոր դաշտափարն ալ զանազան և փոփոխական պիտի ըլլայ. մինչեւ ընդհանուական ժամանակին գաղափարն անփոփի է պարզ : Երկրորդ, թէ համարնք թէ հոգեկան աւել միայն ըլլայն՝ այս տաեն ըստ արհատուկեան գրութեան շարժումն պիտի ըլլար, վասն զի ըստ իրենց շարժումն նիւթական հակաց միայն յասուկ է : իսկ ժամանակի ընդհանուական կ'ըլլար գարքէնալ, եթէ նիւթական արարածք ալ ըրպաւս ըլլայն : — Կարձեալ, ժամանակը չափելու համար շարժումը կը գործածէնք, և շարժմունքը չափելու համար զժամանակ . աւտի յոթի շըլլան ըրած կ'ըլլայնք եթէ մի և նոյն բանն ըլլայն : Ուրեմն ասէք ալ, յայտնի է թէ արքայի ըլլար բարեկան ընթացքն է օրն, թէ շարժման տևողութիւնն, և կամ թէ այս երկուքն ի միամին : Եթէ առաջինն ըլլար, արեգակն իւր ամբողջական ընթացքն եթէ նաև մէկ ժամանուան մէջ կատարէք՝ այն պիտի ըլլար օրն : Եթէ տևողութիւնն, ուրեմն պիտի շըլլար օրն, — եթէ մէկ ելքէն առեւու ցմիւն այնչափ կարճ ըլլար տեսողութիւնն որչափ է մէկ ժամն, — բայց եթէ երբ արևն քսանուշորս անգամ ընէր իր շրջանը : Իսկ եթէ երկուքն ի միամին, եթէ արևն իւր բոլորական շրջանը մէկ ժամանուան մէջ կատարէք՝ այն պիտի չկոչուէր օր, և ոչ յետ մուից արևու, ժամանակի այն տևողութիւնն որ պէտք էր արևու իւր շրջանը ամբողջացնելու համար :

« (Են) լուսաւորք՝ ի հաստատութեան երկնից՝ ի լուսաւորութիւն՝ ի վերայ երկրի . . . ի նշանս և ՚ի ժամանակս և յաւուրս և ՚ի տարիս <sup>1</sup> » : Կան անշուշտ և ես ամենսին չեմ ըսեր, թէ բրտի անուղյն շարժմունքն ըլլայ օր, և ոչ իսկ ժամանակ՝ ինչ ալ ըսէ ինքն :

Ես կը փափաքիմ զիտնալ ժամանակին զօրութիւնն և բնութիւնը, որպէս մարմնոց շարժմունքը կը չափենք, և կ'ըսենք, օրինակի համար, թէ այն ինչ կրկնապատիկ երկայն է քան զայս : Արդ կը հետազօտեմ, վասն զի օր ըսելով միայն արեւուն կացութիւնն ցիւմացուիր երկրիս վրայ, որով օրը գիշերէն կը տարբերի, այլ նաև իւր բոլորական շրջանը մէկ ելքէն միւս ելքն, որուն համար կրսենք, Այսափ օրեր անցան, հասկընալով միանգատմայն գիշերներն ալ, որոնք անոնց հետ կապակցեալ են, — կը հետազօտում ուրեմն թէ օրն արեւուն շարժմունքն յառաջ գալով, և անոր բոլորական ընթացքն մէկ ելքէն ցմիւնն, արդեօք շարժմունքն է օրն, թէ շարժման տևողութիւնն, և կամ թէ այս երկուքն ի միամին : Եթէ առաջինն ըլլար, արեգակն իւր համբողջական ընթացքն եթէ նաև մէկ ժամանուան մէջ կատարէք՝ այն պիտի ըլլար օրն : Եթէ տևողութիւնն, ուրեմն պիտի շըլլար օրն, — եթէ մէկ ելքէն առեւու ցմիւն այնչափ կարճ ըլլար տեսողութիւնն որչափ է մէկ ժամն, — բայց եթէ երբ արևն քսանուշորս անգամ ընէր իր շրջանը : Իսկ եթէ երկուքն ի միամին, եթէ արևն իւր բոլորական շրջանը մէկ ժամանուան մէջ կատարէք՝ այն պիտի չկոչուէր օր, և ոչ յետ մուից արևու, ժամանակի այն տևողութիւնն որ պէտք էր արևու իւր շրջանը ամբողջացնելու համար :

Սակայն չեմ հետազօտեր արդ. թէ ինչ բան է օրն . այլ թէ ինչ բան է ժամանակն, որով չափելով արեգակնային հոլովմունքը՝ կատարուած է այն, կ'ըսենք, կ'էս ժամանակի մէջ, նուազ քան

զսովորականն , համարելով թէ կատարէ այնափակին մէջ որչափ որ կը պահանջուի 12 ժամու տեղողութեան . և բաղդատեղով ժամանակին այս տարբերութիւնքը՝ կ'ըսենք թէ մին կրկին է միւտոյն , երբ արեգակն մէկ մ'այս , մէկ մ'ալ այն ժամանակի մէջ մէկ ելքէն մինչեւ միւտ ելքն իր շրջանն ընէ : Ոչ ոք ապա ըստ ինծի , թէ ժամանակը՝ երկնային մարմնոց շարժմունքն են : վասն զի , երբ արեն զադրեցաւ իւր ընթացքէն այն մարդուն աղօթքովն , որ կ'ուզէր ամբողջացնել իւր պատերազմական յաղթանակը , իրաւցնէ արեն կեցաւ , բայց ժամանակն կ'ընթանար . և այնչափ ժամանակի մէջ որշափ որ պէտք էր , այն պատերազմն կատարուեցաւ : Ասկէ ուրեմն ես կը հետեցնեմ թէ ժամանակն տարածութիւն՝ մ'է , բայց աղէկ կը տեսնեմ ար-

գեօք , թէ ինծի այսպէս կ'երեի : Դունանչցուր ինծի , ոչ ճշմարտութիւն և լոյս :

Արդեօք ժամանակն է չափ շարժման . Եթէ մէկն ինծի ըսելու ըլլար , թէ ժամանակն է մարմնոց շարժմունքն , կ'ուզէս դու , (ով ճշմարտութիւն) որ ես անոր հաւանէի : Ոչ երրէք : Վասն զի դու ըսիր թէ ամէն մարմնն ժամանակի մէջ կը շարժի , և ես կ'ըմբռունեմ զայս . բայց թէ մարմնոց շարժումն է ժամանակ , զայս չեմ ըմբռներ . և դու ալ չըսիր : Վասն զի երբ մարմնն մը կը շարժի , ինչպէս զիտնամ ես թէ որշափ ատեն շարժման մէջ եղած է , եթէ ոչ ժամանակով չափելով անոր շարժման սկսին և վերջանալը , եւ եթէ ես տեսած չեմ անոր սկսին և չեմ տեսներ անոր դադրին , չեմ կրնար չափել զայն , որ գեռ կը շարժի , բայց եթէ երբ սկսայ տեսնել և մինչեւ որ դադրեցայ : Եթէ երկայն ատեն տեսայ , կ'ըսեմ միայն թէ երկայն ժամանակ զիտեցի . բայց ոչ թէ որշափ որ է : Վասն զի որշափ ըլլարն համեմատելով կ'ըսենք , այնչափ՝ որշափ է անիկայ . անոր կըրկին և կամ թէ հաւասար : Իսկ եթէ

տուելու սահմանը՝ ժամանակին վերցեալ էու . թիւնը կը նշանակէ կամ դաշտափարը . ուստի թանձրացեալ կերպով իմանալու համար պէտք ենք ըսել , թէ ժամանակն է իւստան յաշուգութիւն : Եւ ըստ այս՝ նշապէս վերն ըսնէք , շատ լակ միաբանի , նիպպոնյ պատգամախօսն ժամանակին համար տուած սահմանն այս վերջույուն հետո , որ լաւացյն համարուածն է : Ասկէ կ'ուզէնք թէ ծարածախիւն բառն եթէ վերցական իրաց կամ մոռաց վրայ առնելու ըլլանք , ինչպէս Ս . Օդուաննու ալ կ'ըսէ , թէ իրնայ մոռաց կերպամալ առնութիւն ժամանակին դաշտիւր կ'ըսայ այն , վասն զի մարդուս մոռքն ալ գաղափարական յալորդութեանց անընդհաւա հանդիսարանը՝ նաև եթէ ՚ի թանձրացեալն առնելու ըլլանք՝ միշտ կը համապատասխանէ վերի ըսածնն , պայմինն թէ ժամանակն է իրական յարդութիւնն է : Բայց վասն զի եթէ կրական է՝ նյոյ տարածութիւնն է : Իսկ է եթէ տարածութիւնն է ուրեմն ուրիշ բան չէ ժամանակն բայց եթէ մի և նյոյ իրաց տարածական յաջորդութիւնն . ուրիշնեան ժամանակն վերցացմամբ իրաց՝ ինքն յինքէ ան բան մը չէ :

1 Հատ փափակէլ է Ս . Օդուաննոսի պէս ջրաւոր հանձնարով մը բնազանցութեան ասպարիսն մէջ այսպիսի գժուարին նիւթոյ մը իսկութիւնը սահմանեն , մանաւանդ էթէ մասնական կերպով զայն որշափ ըլլար . վասն զի բառածութիւնն շատ ընդհանուր ըստաւծ է և այլ և այլ բանի իրնայ պատշաճիւր . որով ժամանակին գալարները գեռ կը մնայ ըստ իմբեք : Բայց պատու հանդէր խոսուղանելու ենք թէ որշափ որ ըստ ամենայնի բացայացաւ և որոշչէ սահման չէ , սակայն վրիպակ ալ չէ , եթէ ըստ իւր մոռաց լուսաբանուի , մերձեցնելով արդի որշափիտ իմաստափիրաց տուած սահմաններուն : Այսպէս կալութիւն ինը պատշաճ կամ մասնակին էթէ անդունք կամ մասնակին էթէ անդունք առ մէջ մողորութեան անդունք . մը բաց կը տեսնուի : Վասն զի պաւագնիւն բառ կրնայ վերաբերի ոչ միտյն պայուսական իրաց , այլ նաև կարեւոր և անսպասակ հակին . որով զԱստուած ժամանակի սակ ձգած կ'ըլլայ , որ անտեղի է ամեններ :

Ստեղայն քան զամենն աւելի Պալմէս սպանիացի հանձնարեղ փիլսոփայն տուած սահմանն ընտրելի կը համարուի , որ կ'ըսէ թէ ծանձանն է եւ յաջորդածիւնն . սպանիաց է էռութեան մը յուշութիւնն և փոխադրձ ոչութեան մ'յէռութիւնն անցնին , բայց աւելի հջութեան համար՝ եթէ աւելցըններ այս բառու այցալիան իրաց , որ յարակից է յաջորդածիւն , ասով կարեւոր էակն Աստուած ազատ կը մնայ ժամանակին : Այս

պարբերական շարժումն տալով մարմոյ, կարենանք աջող տեսնել միջոցին այն կէտն՝ ռասփ կու գայ և ընդ որ կ'ընթանայ շարժուն մարմինն կամ անոր մէկ մասն, կրնանք ըսել թէ այն մարմնոյն շարժումն կամ անոր մէկ մասըն այս կիտէս մինչև այն կէտն՝ որ չափ տեսած է.

Ուրեմն այլ ինչ ըլլալով մարմնոյ շարժումն և այլ ինչ որչափ տեսելու չափն, ով շտեսնար թէ առ ու կը պատշաճի ժամանակ անունն: Վասն զի եթէ նաև մարմնոյ մը շարժմունքն երբեմն զանազան ըլլայ երբեմն կայուն, սակայն ժամանակով ոչ միայն անոր շարժմունքն, այլ նաև անոր անյարժ կենալը կրնանք չափել, ըսելով թէ այնչափ կեցաւ որշափ շարժեցաւ, կամ թէ կրկին և կամ եռապատիկ աւելի քան զշարժիլն անշարժ կեցաւ. միով բանիւ ինչ որ կամ կ'իմանանք և կամ կը համարինք մեր չափով՝ աւելի կամ նուազ, ինչպէս սովորական է ըսեն:

Ուրեմն ժամանակն մարմնոց շարժմունք չէ:

Լոյս կը խնդրէ Աստուծմն. — Կը խոստովանիմ, ով Տէր, թէ դեռ չեմ գիտեր ինչ բան է ժամանակն. և միանգամայն կը խոստովանիմ, որ ստոյգ գիտեմ թէ ժամանակի մէջ կը խօսիմ առ քեզ, Տէր. և թէ երկայն ատեն է որ կը խօսիմ, և թէ այս երկարութիւնն ուրիշ բան չէ, բայց եթէ տևողութիւն ինչ ժամանակի, Եւ ինչպէս կրնամ գիտնալ զայ՝ ես որ ժամանակին ինչ էութիւն ըլլալը կ'անդիտանամ. թերեւս գիտցածս չեմ կրնար բացատրել: ինչպիսի խեցութիւն, որ չեմ գիտեր թէ ինչ է զգիտցածս: Ահաւասիկ առաջի Աստուծյոց զի ոչ ստեմ. ինչպէս է լեզուս, այնպէս է իմ սիրոս: «Դու լուսաւոր առնես զնրադ իմ, տէր Աստուած իմ, լյս արա ինձ ՚ի խաւարի»:

ժամանակն չէ չափ ժամանակի. — Միթէ անկեղծութեամբ չի խոստովանիր իմ հոգիս, ըսելով թէ ժամանակ կը չափեմ: կամ թէ իրաւընէ, Աս-

տուած իմ, կը չափեմ առանց դիտնալու թէ ինչ չափածս: իս որ ժամանակ նակով կը չափեմ մարմնոց շարժմունքը՝ չեմ գիտեր չափել զժամանակ: Ի՞նչպէս կրնայի ես չափել շարժման տևողութիւնն և երկայնութիւնը՝ առանց չափելու զժամանակն, որուն մէջ կը կատարուին:

Բայց ինչ չափով կրնամ չափել զժամանակ: Թերեւս կարճ ժամանակի մը ըլլայ երկայնագոյն ժամանակի մը չափ, ինչպէս խորանարդն է չափ ձողաչափի: Ըստ այսմ կարճ վանկով մը կը չափենք երկայն վանկ մը, և կ'ըսենք. այս՝ անոր կրկինն է: Ըստ այսմ քերթուածի մը երկայնութիւնը կը չափենք տողից երկայնութեամբ, և տողիցն՝ ոտից երկայնութեամբ և ոտից երկայնութիւնը վանկերով, և երկար վանկերուն երկայնութիւն ալ կարճ վանկերով. և այս ոչ թէ թղթի վրայ, և իբր տեղույ հեռաւորութիւն, այլ ժամանակի վրայ, զրո կ'անցընենք զանոնք հնչելու համար: Ըստ այսմ կը սենք. ոտանաւոր մ'երկայն է այշափ տունով, տուն մ'երկայն է այշափ ոտքով, ոտք մ'երկայն է այշափ վանկով, և վանկ մ'երկայն է՝ վասն զի կարճի մը կրկինն է:

Սակայն այսու ժամանակին չափը չորոշուիր. վասն զի կրնայ հանդիպիլ որ հանգատեամբ արտասանուած տուն մը աւելի ժամանակ անցընէ՝ քան թէ երկայն մ'արագութեամբ: Նոյնն ըսելու է նաև տաղի մը, ոտքի մը և վանկի մը համար: Ասիկայ ինծի ըսել կու տայ ուրեմն, թէ ժամանակն տարածութիւն մ'է: Բայց ինչ բանի տարածութիւն, չեմ գիտեր. և զարմանակի է՝ թէ չէ ինքնին մնաց (տարածութիւն): Իրաւընէ, ինչ բան կը չափեմ ես, գու ըսէ ինձի. ով Տէր, երբ կ'ըսեմ անորոշակի. Այս ժամանակս աւելի երկայն է քան զայն. — կամ նոյն իսկ որոշակի. թէ այս՝ անոր կրկինն է: Գիտեմ թէ ժամանակը կը չափեմ. բայց ոչ թէ զապադայն՝ որ դեռ չկայ. ոչ ներկայն՝ վասն զի պարզ է: և ոչ անցեամբ, վասն զի ոչ ևս է: Ի՞նչ բան կը չափեմ ես ուրեմն: Արդէն

ըսի, ժամանակը. բայց ոչ թէ անցեալն, այլ զայն որ կ'անցնի.

Ժամանակն ի՞նչպէս կը լախորհի. — Երկայնամիտ լեր, ով հոգի իմ, և կը րկնապատկէ ուշադրութիւնդ. Աստուած օգնական է մեր. Նա արար զմեղ և ոչ մեք էաք (կամ եղաք): Ուշ զիր ուր ճշմարտութեան արշադրյան կը սկսի ծագիլ: Այս համարէ թէ մարմնոյ մը ձայնն կը սկըսի հնչել և կը հնչի, և դեռ կը հնչէ, և կը լրէ. արդ լրութիւն է, և ձայնն անցաւ, և ոչ ևս է ձայն: Հնչելէն յառաջ հնչուելիք էր և չափելն անկարելի էր, վասն զի գեռ չկար. և հիմայ ալ անկարելի է, վասն զի ոչ ևս է: Հնչման ժամանակ, այս կրնար չափուիլ, վասն զի այն ատեն կար իր ինչ՝ կարելի չափման, թէպէտ և անկայուն, վասն զի կու գար և կ'երթար: Միթէ ասո՞ր համար աւելի կարելի էր: Վասն զի անցնելով կը տարածուել ՚ի միջոց ինչ ժամանակի, որ կրնայ չափուիլ. որովհետև ներկայն անտարած է: Ուրեմն եթէ այն ատեն կը րնար չափուիլ, համարէ թէ ուրիշ ձայն մ'ալ սկըսի հնչել, և հնչէ շարունակ և առանց ընդհատման, և չափենք զայն քանի որ կը հնչէ, վասն զի դադրելուն պէս անցեալ կ'ըլլայ և չի չափուիր: Չափենք զայն, և ըստնք թէ որչափ է: Սակայն գեռ կը հնչէ. և չի կրնար չափուիլ եթէ ոչ այն կիտէն՝ ուստի սկսաւ հընչել, մինչև այն կէտն՝ յորում ալ կը դադրի. վասն զի անջրպետն սկսելու կիտէն մինչև վերջանալուն կէտն կը չափուի: Ուրեմն ձայն մը քանի որ դեռ կը հնչէ, չի կրնար չափուիլ որ բարուի թէ երկայն է կամ կարճ, կամ հաւասար, կամ կէս, կամ կրկինն ուրիշ ձայնի մը, և այլն: Իսկ երբ կը վերջանայ՝ ալ չկայ. Բնագէտ ուրեմն կրնայ չափուիլ: Այսուհանդերձ, կը չափենք ժամանակն, և ոչ թէ այն ժամանակն որ գեռ չկայ, կամ զայն որ ոչ ևս է. ոչ այն ժամանակն՝ որ տարածութիւն չունի, և ոչ իսկ զայն որ անսահման է. ըստ կ'ուզեմ թէ ոչ զապադայն, ոչ զանցեալն,

ոչ զներկայն և ոչ զայն որ անցնելու վըրայ է. և սակայն դարձեալ ճշմարիտ է թէ մենք կը չափենք ժամանակն . . . ի քեզ, ով միտք իմ, կը չափեմ ես զժամանակն . մի հակառակիր թէ ինչ պէս կ'ըլլայ այս, մի հակառակիր զանազան զդացմանիրդ : ի քեզ կը չափեմ, կ'ըսեմ, զժամանակն . այն տպաւորութիւնը կը չափեմ՝ զոր իրք կ'ազգեն՝ ՚ի քեզ յաջորդաբար, և անցնելով՝ կը թողուն՝ ՚ի քեզ իրենց զրոշմբ: և զասիկայ կը չափեմ ես՝ վասն զի ներկայ է, և ոչ թէ անոնց իրականութիւնը՝ զորս անցնելով կը թողուն: Այս է զոր ես կը չափեմ՝ ժամանակը չափած ատենս: Ուստի պէտք է ըսել. թէ ժամանակն ուրիշ բան չէ՝ բայց եթէ այն տպաւորութիւնը, կամ թէ ճշմարիտ չէ որ ես զժամանակը կը չափեմ:

Միթէ շնչք չափեր մենք նաև զլուութիւնն, ըսելով թէ այն ինչ լրութեանն այնչափ տևեց՝ որչափ որ տևեց այն ինչ ձայնն: Միթէ միտքերնիս շնչք դարձըներ ձայնին տեսողութեան վրայ, իրեն թէ հնչէր, որպէս զի կարենանք չափ մը որոշել լրութեան տևելու ժամանակին: Վասն զի անձայն և անշրջունջ կը ընանք մենք քերթուածներ, տաղեր, և ամբողջական ճառեր ալ մոտածել. չափել զանազան շարժմանց աստիճաններն և մէկ ժամանակի մ'ուրիշ ժամանակի հետո ունեցած համեմատութիւնը, անանկ իրեն թէ բացայատ ձայնիւ արտասանեինք: Եթէ ոք ուզէ երկնցնել ձայն մը, և մնքովն որոշէ թէ այսչափ ատեն պիտի երկնցընէ, այնպիսին կը ձևացընէ անտարակոյս նախ լրսութեան մէջ այն ժամանակին չափը, և յանձնելով զայն յիշողութեան՝ կը սկսի արտաքերել զայն մինչև մինչեւ ՚ի կէտն որ որոշած էր, մինչեւ որ ալ չհնչեց և պիտի չհնչի. վասն զի անիկայ որ արտաքերեցաւ՝ հնչեց, և անիկայ որ մնաց՝ գեռ հնչուելիք է. և այսպէս առաջ կ'երթայ. մինչեւ որ ուշադրութիւնն զապագայն ՚ի ներկայն փոխադրէ, ապագային նուազմամբ զանցեալն աճեցընելով, մինչեւ որ ապագայն բարկանդակապէս սպառի յանցեալն :

Միտքն է չափ ժամանակի . — Բայց բնչպէս կրնայ նուազիլ և լիրնալ ապագայն՝ որ գեռ չկայ . կամ ինչ կերպով կրնայ աճի անցեալն՝ որ ալ ամենեին չկայ . եթէ ոչ վասն զի հոգւոյն մէջ, որ միշտ կը գործէ, կը գտնուին այն երկն ալ, այսինքն է՝ ակնկապութիւնն, ուշադրութիւնն և յիշողութիւնն, Առարկայն ակնկալութեան կ'անցնի ընդ ուշադրութիւնն և կ'ըլլայ յիշողութիւնն : Սակայն, ով կրնայ ժխտել, թէ ապագայն գեռ ևս չկայ : Բայց ահա արդէն ապագայ իրաց ակնկալութիւնն կայ մեր հոգւոյն մէջ . Եւ ներկային համար ով կրնայ ժխտել թէ չկայ այլ ևս . մինչդեռ անոր յիշատակն կենդանի է գեռ մոքերնուո մէջ . Ո՞վ կրնայ ըսել, թէ ներկայն ամեննեին տևողութիւն չունի, որովհետև անբաժանելի կէտէ մը կ'անցնի, մինչգեռ կը շարունակուի մեր ուշադրութիւնն, որով այն՝ որ ներկայ ըլլալիք է՝ կը մնայ ապագայ . ուրեմն ոչ թէ ապագան է երկայն երեցոյն, որ դեռ բան մը չէ, այլ այնոր ակնկալութիւնն է երկայն կը տեսէ :

Տաղ մը կ'ուզնեմ արտասանել՝ զոր մոքիս մէջն ունիմ . սկսելէս յառաջ ակնկալութեամբ զայն ամբողջապէս կ'ընդգրկեմ : Սկսելուս պէս, որչափ որ մաս մը կը պակսեցնեմ անկէ վիրածելով յանցեալն՝ կը փօխանցի այն իմ յիշողական կարողութեանս մէջ : Ուրեմն իմ մատաւրական կեանքս ամբողջապէս ուրիշ բան չէ՝ բայց եթէ յիշատակութիւնն, նկատմամբ այն մասն՝ զոր արտասանեցի, և ակնկալութիւնն, նկատմամբ այն մասին՝ զոր պիտի արտասանեմ : Սակայն ներկայ է իմ ուշադրութիւնն՝ ընդ որ կը փօխանցի ապագայն՝ անցեալ ըլլալու համար . և որչափ աւելի ապագայն շուտ սահի նոյնչափ աւելի ակնկալութիւնն կը նուազի և ուշադրութիւնն կը բարգաւաճի, մինչեւ որ ամբողջ ակնկալութիւնն սպառին բոլոր այն արտասանութիւնն՝ ի յիշողութիւն փօխուի : Եւ ինչ որ կ'ըսեմ ամբողջ տա-

զին համար՝ նոյնպէս կ'ըլլայ նաև առանձին անոր մասանցն և վանկերուն համար . նոյնպէս կ'ըլլայ նաև շատ երկայն գործողութեան մը մէջ, որուն փոքրագոյն մաս մը կրնայ ըլլալըսած երգս : Նոյնն ըսելու է ամբողջ մարդկային կենաց համար, որոյ մանրամասունքն են մարդուս ամէն գործերն . նոյնն ըսելու է նաև գարուց ընթացիցն համար, որոյ մասունքն կը կազմեն բոլոր մարդկային կենաց ընթացքը :

Զկսմունք հոգւոյն առ Աստուած . — Բայց ավան զի լաւ է ինձ ողորմութիւն քո քան զկեանս իմ , և իմ բովանդակ կեանքս ուրիշ բան չէ՝ բայց եթէ ցրումն, քու անդ ժողովեց զիս 'ի ծէր իմ յլրդիդ . քո, որ միշնորդ է ընդ քեզ՝ ով Միութիւն , և ընդ մեզ՝ որ բազմութիւն ենք, զանազանութիւնն և բաժանումն . որպէս զի իրմով յայն միանամա՞ որ ժողվեց զիս, և ամփոփելով զիս իմ նախլինթաց օրերուս ցրումն երէս, զիմեմ առ քու միութիւնդ, ոչ փոյթ ընելով այնց որ ոչ ես են . ոչ փափոյթ ըլլալով այնց իրաց՝ որք կուգան և կ'անցնին . այլ 'ի յառաջադէմսն նկրտելով . ուշ եղեալ ընթանալով առանց ասդին անդին խոտորելու՝ 'ի մըրցանակն, զոր քու ձայնդ խոստացաւ ինձի 'ի փառս . ուր պիտի լսեմ քու գովութեանդ երգերն և պիտի վայեկեմ մոք քու փառքդ, առանց ապագայի և առանց անցելոյ : Արդ պակասեցան ամք իմ յոգւոց ելանելոյ, և դու իմ նեցուկս, ծէր իմ 'և հայր, յաւիտեան կաս :

Բայց ես շատ երկայն նրբագննեցի զժամանակն, որոյ կարգն ինծի անծանօթէ, և աղմկալից յեղափոխութիւնքն կը ջլատեն իմ նորհուրդներս, զուղիւզն հոգւոյ իմոյ, մինչեւ որ վտեալ և լուծեալ իմ հոգիս քու սիրոյդ բոցով՝ գայ ընկըզմի 'ի քեզ :

Արարլագործորենէն յառաջ ժամանակէ կար . — Եւ այն ատեն պիտի հաստատուիմ 'ի քեզ և 'ի ճշմարտութիւնդ 'ի կերպի իմում, և այլ ևս պի-

տի շտանջուիմ մարդկասյին խուզարկութեանց անյագ հետաքրքրութեամբ , որք քան զմիտս զերազանց գժուարակ կընճուն իրաց կ'անձկան բաելով , թէ Աստուած ինչ կ'ընէր երկինք ու երկիր ստեղծելուն յառաջ . կամ թէ ինչ մտածութենէ շարժած ըրաւ այն բաներն , զոր առաջ երգեք ըրած չէր :

Ով , Տէր , տուք իրենց , որ ըսածնին հասկընան , և իմանան թէ երկէք ըստուիր առ այն՝ ուր ժամանակ վայ . վասն զի երգեք ըլրաս ըսելն՝ ուրիշ բան ըսել չէ բայց այն թէ բնաւ ժամանակի մէջ չգործեց : Հասկընան վերջապէս , թէ ստեղծումէն յառաջ ժամանակ չկար , և այս շաղակրասութիւններէն ետ կենան : Այն բանին վրայ դարձնեն իրենց հայեացքն՝ որ ներկայապէս կը կենայ իրենց առջն , և իմանան թէ դու , ով յափտենական արարիչ ամենայն ժամանակաց՝ կը կանխսես քան զամենայն ժամանակս . և թէ բնաւ մէկ ժամանակ մը քեզի ժամանակակից չէ և ոչ արարած մը , թէպէտ և ըլլար իսկ մի՝ որ կանխէր քան զժամանակս :

Աստուած մարդկանցիմ տարրեր կը տեսնէ . — Տէր Աստուած իմ , որ չափ խոր է քու գաղտնեացդ անդունդ . ու ոչ իմ մալրութեանց հետեանքն որչափ հեռացուցին զիս անիէ : Լոյս տուր իմ աշացս , որպէս զի քու լուսովդ ուրախանամ : Եթէ զօրաւոր միտք մը ըլլար գիտուն և կանխագէտ , որոյ առջեւ ամենայն անցեալ և ապագայ իրք ներկայ ըլլային , ինչպէս ինծի ամեննեին ներկայ է սաղմոս մը , անշուշտ պակուցումն

և զարմանք կը պատճառէր այնպիսի միտքն . վասն զի պիտի զիտնար յայսնի կերպով այն ամէն բաներն , որոնք անցեալ դարերուն մէջ եղան , և զանոնք որ գեռ պիտի ըլլան ապագայ դարուց մէջ , այնպէս ինչպէս որ ես գիտեմ սաղմոնն երգած ատենս թէ որչափ արտասանած եմ սկիզբէն , և թէ դեռ մրցափ կը մնայ արտասանելիք մինչև ցվերջ : Բայց քաւլ լիցի որ դու , ով Արարիչ տիեզերաց , արարիչ հոգւոց ու մարմնոց , քաւլ լիցի որ այսպէս ճանչնաս զրոյր անցեալն ու զապագայն . բոլորովին տարբեր է քոյդ , բոլորովին հրաշալի , բոլորովին գաղտնի : Սաղմոսն զօր ես կ'երգեմ կամ կը լսեմ , տարբեր կերպով իմ վը ըստ կ'ազդէ և զիս կը շարժէ , և միտքս կը բաժնուի ընդ մէջ ակնկալութեան բառից՝ որ պիտի գան , և ընդ մէջ յիշատակութեան բառից որք արդէն իսկ հնչուած են : Սակայն քու անփոփխելի յալիտենականութեանդ մէջ , այս բանս ամեննեին յի պատահիր . և այս անոր համար է , վասն զի դու ես իրաւցնէ յափտենական արարիչ մոտաց :

Ինչպէս որ իսկզբանէ անփոփխի ծանօթութեամբ ճանցալ զերկինս ու զերկիր , նոյնպէս ալ անփոփխելի դործով ստեղծեցիր զանոնք իսկզբանէ : Ով որ կ'ըմբռնէ զայս՝ խոստովանի գքեղ , և ով որ չըմբռներ՝ նոյնպէս խոստովանի գքեղ : Ո՞հ , որչափ մեծ ես դու . և խոնարհամիտք՝ քու բնակութիւնդ են : « Դու կանգնես զզլորեալս » , և անոնք որ քու բարձրութեանդ վրայ կը յենուն՝ մէկ մ'ալ շեն ինկնար :

« Ի որքոյն Օքսոսինուէ , յամին տեւառն 400 , յօրինեալնշանաւոր երկասիրութեանց մէջ , - կ'ըսէ գաղց : մատենագիրն բուժուզա իր Պատրիարքան շարուց Ա . Օքսոսինուէ գրուածքն մէջ , որ պատկեալ է ի կաձառէն Պատղիս , - մեծ ագոյն յիշատակաց արժանի է մարդկային սրտի այն անմահական նկարագիրն , որ կը կոչուին Խոսովնաւիինէ կամ Գիւր խոստովանաւթեանց ... իսոյց աւելի ինչ կը դատենք քան վիստավանութիւնն . Օքսոսինոսի խոնարհութեան և հանձարցն այս հրաշալի յիշատականին մէջ : Խըր սրբատուն մօրը մահուան

պատմութենէն զերջը Ա . Օքսոսինոս ալ ուրիշ բան չի պատմեր . Տիբերիսի գերախառնութեամբն մօն կանկնուած այն գերեզլանինի առջև կը գագեցնէ իւր պատմութիւնը : Այն ատեն կը սկզբն մարդկային կարողութեանց և յիշողութեան հրաշալեաց վրայ ըրած խոկունքն . քննութիւնն մը խորի մտաց լի խորին տեսութեամբք , հետևեալ երեք ախտից կամ կից վրայ . որք են հետասիրութիւն , հետաքրքրութիւն , և ամբարտաւանութիւն : Կը գտնենք Սկրմաժերմ մաղթանք առ Աստուած՝ զԱ . Գիւր հասկընալու . համար ,

զհաստատութիւնն երկնից՝ որ ճգուած է 'ի վերայ մարդկուն. կը դանելիք մի քան զի՞ հանձնարեղ, քաշտութեառ և գերապան նուուղարկութիւններ ժամանակին էութեան յաւետնեանականութեան որպեսութեան վրայ: Երկասիրութեան առաջնան է պատմութիւն մարդկային հոգւու, որ կը փնտուք զշմարտութիւն և զբարութիւնն արտաքյ Աստուծոյ, և գերջապէս յլլատուած միայն կը դանէ զցնա: իսկ գերջին երրորդ մասն կը հաւասարի, եթէ գերազանց ալ չէ, ամենային ինչ որ կրցաւ յառաջ բերել իմաստութիւնն արարութեան բարձրացն և խորին: Աստ մեր կարծեաց՝ ոչ երեք Աստուծոյ անհունութիւնն և մարգիսյին խորը բնաւ ասիէ աւելի նորամութեամբ և կորովով քննուած են, և լեզուին թափանցիկ վայեցութիւնն միւս համեմատ է մատածութեանց մեծութեանն: Ամբիկեան արծուին թալիչըն երբեմն այնչափ բարձրացաց են, որ գոլազով ինն կը հետևին իրեն, և յայնպիսի բարձրութիւնն կը վերացնէ զմեզ, որոց առջև սոսկումն կը զանկէ, իրբու մօտք ամենցայեցութիւնն Աստուծոյ: Այս անձինք որ շատ կարգացած են զՊուիւէ, պիտի իմանան թէ մեծ անոն եպիսկոպոնն Մելքաց, ինամով հրահանդած է զինքը՝ 'ի վարժս Խոսունանիւն դրոց հաշակառոր հայրապէտին Հիպատոսյ: Վէտէն կամ Խիմոն ՚ի վերա նորդոր, Պոսիէք համարոյն մեծ առջն հրաշալեաց մին, մերկ ՚ի երեխ թէ իւր նախին եպիսկոպոնն և պահնէու բոցազնն Խոսունանիւն դրոց երկրորդ մասին զանազան գըլըւիններին ստացած ըլլոյ, ինչպէս խօս 'ի վերապիտութեան ալ ծննայէ Յանձի բարձր ամենա մեծ առջն գրուածքն: Խոսունանիւնիւն գիշըն, զըր Ս. Օդոստինոս յԱմբիկէ յօրինեց, և հովամէական քաղաքականութեան վերջին նույից, առեն, զարման կ' ազդէ, և իրբէ բուրդ մը զորութեան հանձնարայ մեր առջն կ' արձանանայ: Սոյն այս միանգամայն աղուոր գերմուած մ' է, գեղեցիկ պատմաքարութիւն, և կիֆսիսիայական վայելուշ բանախոսութիւն: Մէնք կը կարծէնք թէ իրաւցնին մտացի անձն մը, ով ալ ըլլոյ՝ միայն անկեղծ ոք ըլլոյ, անկարելի է որ կարույ և խոկայ այս գրոց վրայ և չցառնայ՝ 'ի քրիստոնէութիւն: Ուրիշ խօսք չէնք ըներ այս նարդ խարհէկ երկասիրութեան վրայ, որ ծանօթ է բոլոր աշխարհի:

Լսենք նաև գարուս տալանդաւոր իտալացի Օդոստոս Քոնդի իմաստասէր մատենագրին քըննագամութիւնը Ս. Օդոստինոսի Խոսունանիւն գրուածքին վրայ, զըր կ' ընէն իւր մեծահամառա երկասիրութիւններէն մէկուն՝ այսինքն Դաստ պարօնեան Փիլոսոփայութեան գրուածքին վրայ, երկ կ' ընէն մարդու և յաշխարհի: մասկ իմաստասիրութիւնն մը իմաստասիրութիւն առանձին ուրուգ մարդու և միւնք իմաստութիւն: մի միայն իմաստութիւն մարդուս միւնքն օժանդակեալ՝ 'ի բանէն Աստուծոյ, իմաստասիրութիւնն և Աստուծաբար նութիւն մտացեալ՝ 'ի միասին, ինչպէս երկինք երկիր միացեալ են յԱյնմ՝ որ արարչագործեց զիրենք:

Օդոստինոսի շքնազագիւտ հանձնարայն և վարդապետութեանց:

« Խոսունանիւն գիշըն, ինչպէս խորագիրն ալ ՚ի իմացընէ, և խոսուգանիլ առ Աստուծա իւր անձին պիտաղակը և զնորդս ներքին վերանորդութեան: Կը քննուն և կը զննուին յայսմ ծածուկ խորչ սրտի. կը պատառնի շարին և բարույն պատերազմն, անոնց ներքին և արտաքին պատճառներն, կամաց գաղտնածածուկ շարժառիթն, և անոր շշմարտին ծախօթութեան կետ ունեցած յաջարերութիւնն: Խզմի հրապարական քննութիւնն մ' է այս ըլլորովինն որո գրուածք մը, գիթանսաաց անկարելի, և ամենամեծ ընծայութիւնն մը, թէ Քրիստոնէութիւնն զմացըրութիւն դիտաւորութեան պատուիրելով զօրաւոր յաւաջնազացութիւնն մը կու այս իմաստասիրութեան, և թէ՝ մեր անձին ծանօթութիւնն համբայ կը բանայ մեզ առ հայցողական ծախօթութիւնն: Խոսունանիւն գիշըն գիտաւորութիւնն: Պիտի ապա կը պատմութիւնն գիշըն զմարդկան զմարդկան յաջարակական գիտաւորութիւնն: Օդոստինոս բայց ոչ միանանցիւաց այս այս անձու կը աւելի կամ նուազ մեր ամենա պատմութիւնն է: պատմութիւնն որ յանձնն բարեպաշտի կը փոխուի յաղերս և յերգա նորհակալեաց: Օդոստինոս յինքեան կը գանէ զմարդ, 'ի մարդն կը գանէ զԱստուծուած, 'ի մարդն ընդ Աստուծոյ կը գանէ զՔրիստոնէութիւնն: և 'ի Քրիստոնէութեան քրութու յերգա և կը մըրաստեղիմի զարարչագործութիւնն ափերեաց, և զմի և զնոյն գիրքն մանե կութեան ճշէրէն սկըսելով՝ ծննդոց եւթեն օրեայց մէջ կը մըրթացէ: Խոսունանիւնն որ է փիլսոփայութիւնն մարդոյ. փիլսոփայութիւնն որ է առաջնորդէ առ բնակն աստուածաբանութիւնն բնակն աստուածաբանութիւնն որ է աւարդութիւն իւր անձին, ինքնին կ' երեխ մեզ, և ինքնին կը մենէ իւր գրութեանն ամբողջութիւնը և գեղինակին հետ անոր ունեցած սերտ վերաբերութիւնը: Խոսունանիւնիւն գիշըն և միւնք Յաղուտ, զայց շտացաւ: Այնէւն որ հայրապէտ Հիպատոսյ պատմի է յայսմ իւր անձին, ինքնին կ' երեխ մեզ, և ինքնին կը կազմեն միւնքն մասն կը կազմեն միւնքն այս մատեն, վասն զի կը բովանդակին զպատմութիւնն նախախնամութեան 'ի ներքին մարդն և յաշխարհի: մասկ իմաստասիրութիւնն մը իմաստասիրութիւն մարդուս և պատմութեան, այս ինքն իմաստասիրութիւնն առանձին ուրուգ մարդու և միւնք իմաստութեան: մի միայն իմաստութիւն մարդուս միւնքն օժանդակեալ՝ 'ի բանէն Աստուծոյ, իմաստասիրութիւնն և Աստուծաբար նութիւն մտացեալ՝ 'ի միասին, ինչպէս երկիր միացեալ են յԱյնմ՝ որ արարչագործեց զիրենք: